Կ Ա Ր Ծ Ի Ք

Արուսյակ Ալյոշայի Շիրինյանի «**Պատմական ժամանակի ընկալումը հայ եկեղեցական մատենագրության մեջ (V-XV դդ.)** (կրոնագիտական վերլուծություն) Թ.00.05 – «Կրոնի տեսություն և պատմություն» (պատմական գիտություններ) մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման թեկնածուական ատենախոսության վերաբերյալ

Թեմայի արդիականությունը և գիտական նշանակությունը

Ժամանակի հիմնախնդիրը հումանիտար գիտությունների և փիլիսոփայության գլխավոր հիմնախնդիրներից է, քանի որ ժամանակը, ինչպես նկատել է ռուս փիլիսոփա Ն.Ա. Բերդյաևը՝ ամենամեծ մետաֆիզիկական առեղծվածն ու պարադոքսն է: Ժամանակի, ի մասնավորի պատմական ժամանակի ուսումնասիրությունը կարևոր է ինչպես բնագիտական, այնպես էլ փիլիսոփայական, մշակութաբանական, աստվածաբանական, արժեբանական և մարդաբանական տեսանկյունից, քանի որ այն հնարավորություն է տալիս ոչ միայն ամբողջական պատկերացում կազմելու տիեզերքի, կեցության, այլև տարբեր դարաշրջաններում մշակույթի և պատմության, մարդու աշխարհայացքի, մտածելակերպի և արժեհամակարգի փոփոխությունների մասին: Պատմական ժամանակը մարդուն անցյալից դեպի ապագա տանող հոգևոր կամուրջ է: Պատմաբանին պատմական ժամանակը անհրաժեշտ է անցյալի միասնական, ամբողջական և համոզիչ պատկեր ստեղծելու համար, որտեղ բացորոշվում է յուրաքանչյուր իրադարձության տեղն ու դերը: Թեև պատմաբանը անցյալի պատկեր է կառուցում իր մտքում, սակայն այդ պատկերին վերաբերող ժամանակը ոչ միայն նրա սուբյեկտիվ ընկալումն է, այլև տվյալ դարաշրջանի հասարակության և ազգային ինքնության մեջ գերիշխող ժամանակի վերաբերյալ տեսակետների ածանցյալը: Պատմական ժամանակի արդի ուսումնասիրություններում, նախ, պատմական ժամանակը հասկացվում է մի կողմից՝ որպես պատմություն գրող պատմաբանի մտավոր գործունեության, իսկ մյուս կողմից՝ պատմություն ստեղծող սուբյեկտների հասարակական գործունեության արդյունք: Երկրորդ, պատմական ժամանակը մեկնաբանվում է որպես սոցիալական ժամանակ,

այսինքն՝ հասարակության մեջ տեղի ունեցող իրադարձությունների ժամանակ: Երրորդ, պատմական ժամանակը մեկնաբանվում է որպես ճանաչողական մտակառուցվածք, որը ներառում է ոչ միայն իրականության արտացոլումը, այլև դրա կոնկրետ ըմբռնումը՝ հիմնված տեքստի հեղինակի մտադրության և նպատակադրման վրա: Այլ խոսքով ժամանակի տեսակը և այն, թե ինչպես է պատմաբանը օգտագործում այն անցյալի պատկերի կառուցարկման մեջ, առավելապես կախված է հետազոտողի նպատակներից և խնդիրներից: Այս առումով Ա. Շիրինյանի ատենախոսության թեման արդիական է և կարևոր, որովհետև հայ եկեղեցական մատենագրության մեջ պատմական ժամանակի ըմբռնումների լուսաբանումն ու գնահատումը հնարավորություն կտա ավելի լավ պատկերացնելու հայոց մտածելակերպի և քրիստոնեական ավանդույթի յուրահատկությունների վերաբերյալ:

Ատենախոս Ա. Շիրինյանի ատենախոսության նպատակն է ուսումնասիրել ժամանակի ըմբռնումը հայ եկեղեցական մատենագրության մեջ, ցույց տալ միջնադարյան հայ մտածողների ըմբռնումների տեսական ակունքները, յուրահատկությունները, ժամանակի հոլովույթում պատմական ժամանակի վերաբերյալ պատկերացումների փոփոխությունները, ժամանակի փիլիսոփայական և աստվածաբանական ըմբռնումների ընդհանրությունները և տարբերությունները: Այդ նպատակին հասնելու համար նա լուծում է մի շարք խնդիրներ, ի մասնավորի ներկայացնում է ժամանակի վերաբերյալ անտիկ հունական, հուդայական և հայրաբանության ներկայացուցիչների ըմբռնումները, ժամանակի գծային ըմբռնման ավանդույթի ձևավորումը հայ իրականության մեջ, տարբեր դարաշրջաններում (V-VII դդ., VIII-XI դդ., XII-XV դդ.) պատմական ժամանակի մեկնաբանության յուրահատկությունները և այլն:

Մեթոդաբանությունը և գիտական ապարատը

Ատենախոսության մեթոդաբանական հիմքերը (պատմականության, համանմանության, համեմատության, վերլուծության և համադրության մեթոդներ) ընտրված են ճիշտ և համապատասխանում են թեմայի փիլիսոփայական բնույթին: Պատմական անցյալի մեկնաբանության ավանդական մեթոդներին զուգահեռ նա առաջարկում է կիրարկել ժամանակակից (Հ. Գ. Գադամեր, Պ. Ռիկյոր, Ջ.Ագամբեն)

հերմենևտիկական մեթոդներ, որոնք հնարավորություն են տալիս բացահայտելու ժամանակի միջնադարյան ըմբռնումների իմաստային տարբեր շերտեր: Հեղինակը հստակորեն բացատրում է յուրաքանչյուր մեթոդի կիրառման նպատակը, ինչը վկայում է մեթոդաբանության գիտակցված ընտրության մասին: Արդյունավետորեն են օգտագործվում հերմենևտիկական մեթոդները՝ վերլուծելու համար պատմական ժամանակի ըմբռնման միջնադարյան մոտեցումները: Հեղինակը տիրապետում է թեմային առնչվող հիմնական գրականությանը: Հիմնախնդրի գիտատեսական մշակվածության աստիճանը ենթադրում է ինչպես օտարալեզու, այնպես էլ հայալեզու մասնագիտական գրականության ուսումնասիրություն: Գիտական ապարատը հարուստ է և բազմաշերտ. մեջբերված են հատվածներ ինչպես դասականների, այնպես էլ ժամանակակից մտածողների երկերից, ինչը վկայում է հեղինակի մտահորիզոնի և թեմային տիրապետելու մասին: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից, Եզրակացությունից և Օգտագործված գրականության ցանկից:

Աշխատանքի գիտական նորույթը

Ընդհանուր առմամբ Ա. Շիրինյանին հաջողվել է լուծել իր առջև դրված խնդիրները և ստեղծել մի աշխատություն, որում առկա է գիտական նորույթ: Ըստ էության հայագիտության մեջ առաջին անգամ վերլուծվում է ժամանակի վերաբերյալ պատկերացումները հայ եկեղեցական մատենագրության և ծիսական ավանդույթի մեջ, ցույց է տրվում հայ մատենագիրների կողմից պատմական ժամանակի մեկնաբանության առանձնահատկությունները: Ատենախոսը հիմնավորում է այն դրույթը, որ միջնադարում հայ աստվածաբանական-փիլիսոփայական միտքը ձևավորում է «քրիստոնեական ժամանակընկալման ինքնատիպ մոդել», որն առաջանում է անտիկ փիլիսոփայության, հուդայականության և հայրաբանական աստվածաբանության ստեղծագործական համադրման, այլ ոչ թե պատրաստի հայեցակարգերի պարզ փոխառության արդյունքում: Նա նաև հիմնավորում է այն միտքը, որ V-XV դդ. հայ եկեղեցական ավանդույթի մեջ ժամանակի ընկալումը ներկայանում է որպես մի ամբողջություն, որը միավորում է աստվածաբանական, փիլիսոփայական, արժեբանական և պատմական շերտերը: Օգտագործելով ժամանակի ընկալման հետազոտական հերմենևտիկական մեթոդը, ատենախոսը առաջադրում և հիմնավորում է այն միտքը, որ հայոց մեջ ժամանակը դիտարկվել է

նաև որպես եկեղեցական մտածողության և պատմական ինքնագիտակցության «կառուցվածքաստեղծ կարգույթ»: Հեղինակը ցույց է տալիս, որ հայ միջնադարյան մատենագրության մեջ պատմական ժամանակի ըմբռնումը ապրել է որոշակի էվոլյուցիա: Օրինակ, Վաղ միջնադարի տեքստերում ժամանակի ընկալումը արտացոլում է ոչ միայն պատմագրական, այլև՝ փիլիսոփայական և աստվածաբանական խնդիրները, իսկ հետագա դարերի մտածողների երկերում՝ տիեզերաբանական, մարդաբանական և վախճանաբանական շերտերը:

Դիտողություններ և թերություններ

Չնայած աշխատանքի պատշաճ գիտական մակարդակին և շարադրանքի տրամաբանական հաջորդականությանը, այնուամենայնիվ, առկա են որոշակի խնդրահարույց և վերապահելի դրույթներ, որոնք հավելյալ պարզաբանման կարիք ունեն:

1. Հարկավոր էր ճշտել «**եկեղեցական մատենագրություն**» հասկացության ծավալն ու բովանդակությունը: Քանի որ միջնադարյան հայ մատենագրությունը ինչ-որ իմաստով եկեղեցական է, ուստի ենթադրվում է, որ դրանում պետք է ներառել բոլոր մատենագիրներին՝ պատմիչներին, բանաստեղծներին, աստվածաբաններին, փիլիսոփաներին, սակայն ատենախոսության մեջ անդրադարձ է կատարվում ոչ բոլոր հայ մատենագիրներին: Գուցե դրա պատճառն այն է, որ հեղինակը վերլուծել է հիմնականում այն մատենագիրների երկերը, որոնք արտահայտվել են ժամանակի և պատմական ժամանակի մասին: Այդ դեպքում անհասկանալի է, թե ինչու են անտեսվել միջնադարյան պատմիչները, այն աստվածաբան փիլիսոփաները (Հովհաննես Սարկավագ Իմաստասեր, Վահրամ Ռաբունի, Հովհան Որոտնեցի և այլք), ովքեր ժամանակի մասին ունեն տեսական ըմբռնումներ: Այս համատեքստում կարծում եմ ճիշտ կլիներ, եթե ատենախոսը հստակ սահմանազատեր նաև «**ժամանակ» և «պատմական ժամանակ**» հասկացությունները:

2. Ատենախոսության վերնագրի մեջ նշված է «**կրոնագիտական վերլուծություն**», սակայն բուն տեքստում պարզաբանված չեն (այդ հասկացությունը տեքստում համարյա թե չի էլ գործածվում) կրոնագիտական վերլուծության տարբերությունները

և ընդհանրությունները աստվածաբանական, փիլիսոփայական և պատմական վերլուծության ձևերից:

3. Թեև ատենախոսն իր առջև խնդիր է դնում (տե՛ս էջ 13) «ներկայացնել հայ փիլիսոփայական և աստվածաբանական տեքստերում ժամանակի հիմնական կարգույթները (գծային, փուլային, վախճանաբանական և այլն)», սակայն ատենախոսության մեջ փիլիսոփայական կարևոր տեքստեր (օրինակ, ժամանակի վերաբերյալ Վահրամ Ռաբունու, Հովհան Որոտնեցու տեքստերը) վերլուծված չեն: Իսկ Դավիթ Անհաղթը ներկայացվում է Անանիա Շիրակացու ենթագլխի մեջ, մինչդեռ Դավիթը, որպես հայ փիլիսոփայության աշխարհիկ ուղղության հիմնադիր, արժանի ավելի մանրակրկիտ անդրադարձի: Դժբախտաբար «տուժել» են ոչ միայն միջնադարյան հայ մտածողները, այլև դրանց մասին մենագրություններով հանդես եկած հայ փիլիսոփա պատմաբանները (թերևս ի բաց առյալ Ս.Ս. Արևշատյանի), որոնք «բացակայում» են օգտագործված գրականության ցանկից: Օրինակ, Կ. Միրումյանը «Անանիա Շիրակացի» մենագրության մեջ հրաշալի կերպով մեկնաբանում է ժամանակի և հավերժության վերաբերյալ հայ բնափիլիսոփայի ըմբռնումները: Իսկ Գ. Գրիգորյանը «Հովհան Որոտնեցի» մենագրության մեջ վերլուծում է ժամանակի վերաբերյալ Տաթևի համալսարանի հիմնադրի հայացքները: Ս. Զաքարյանը իր «Սուրբ Գրիգոր Տաթևացու փիլիսոփայությունը» աշխատության մեջ ներկայացնում է ժամանակի և հավերժության վերաբերյալ Տաթևացու պատկերացումները:

4. Ատենախոսը կատարել է զգալի աշխատանք, սակայն դրա արդյունքները ամբողջությամբ չեն արտահայտվել գիտական նորույթներում: Օրինակ, միջնադարը և հայ եկեղեցական մատենագրության պատմությունը նա բաժանում է երեք փուլի (ի դեպ, այդ բաժանման հիմքը հստակ չէ), Եզրակացություններում մեկ առ մեկ թվարկում է հայ մատենագիրների ձեռքբերումները, բայց գիտական նորույթներում բացակայում է ընդհանրական այն դրույթը կամ դրույթները, թե այդ փուլերը պատմական ժամանակի մեկնաբանության հարցում ինչո՞վ են իրարից տարբերվում, ի՞նչ ուղղությամբ են տեղի ունեցել պատմական ժամանակի ըմբռնումների փոփոխությունները:

5. Ատենախոսության մեջ հանդիպում ենք անհաջող ձևակերպումների: Օրինակներ. «Մեզ հասած միլեթյան մեծ եռյակի բոլոր **տիեզերական հասկացություններից** ամենածավալունը Անաքսիմանդրի **աշխատությունն է**» (էջ 20), «Մայրագոմեցին ունի **դիալեկտիկական կառուցվածք**, որը **չի ոչնչացնում նրա մտածողությունը ցուցադրում** է...» (էջ 100), «Երզնկացու «մտքերը **կանխում են** ինչպես ժամանակի բացարձակաբանական ըմբռնումը Օգոստինոսի մոտ...» (էջ 138), «**հին** հասկացությունների վերլուծություն» (էջ 156), «Մենք վերլուծեցինք Եզնիկ Կողբացու և Եղիշեի **հասկացությունները**...» (էջ 157), «Այս **գաղափարները** նախանշում են եվրոպական **Նոր Դարի** նմանատիպ **հասկացություններ**» (էջ 160) և այլն:

Առաջարկություններ

Թեմայի հետագա լրամշակումների դեպքում, կարծում եմ, շահեկան կլիներ հետևյալ նկատառումների հաշվառումը:

1. Հարկավոր է մտածողների անունները և հասկացությունները գործածել մեկ ձևով, ընդ որում նկատի ունենալ հայ փիլիսոփայապատմական գրականության մեջ արմատացած ձևերը: Օրինակ, էջ 8-ում գործածված է «Դիոնիսիոս Արիոպագացի» անվանաձևը, էջ 120-ում՝ «Դիոնիսիոս Արիսպագացի» ձևը, էջ 126-ում՝ «կեղծ Դիոնիսիոս Արեոպագացի», էջ 143-ում՝ «Դիոնիսիոս Արեոպագացի», էջ 22-ում մի դեպքում գրված է Հերակլիտուս, մի տող ներքևում՝ Հերակլիտոս, նույն էջում գրված է Դեմոկրիտ, իսկ հաջորդ տողում՝ Դեմոկրիտոս: Տեքստում գործածված է «Բոետիոս» անվանաձևը-պետք է լինի Բոեցիուս, գործածված է «Տիմեոս», պետք է լինի «Թիմեոս» և այլն:

2. Անհրաժեշտ է օգտագործել հայերեն թարգմանված բնագրերը: Օրինակ, վաղուց հայերեն են թարգմանվել Պլատոնի «Թիմեոսը», Օգոստինոս Երանելիի «Խոստովանությունները», Բարսեղ Կեսարացու «Յաղագս վեցօրեայ արարչութեան» երկը և այլն:

3. Հեղինակը բազմիցս նշում է, որ ծավալի պատճառով մանրակրկիտ չի անդրադառնում այս կամ այն մտածողների հայացքների լուսաբանմանը: Առաջարկում եմ հետագայում նյութը ներկայացնել ոչ թե ըստ հեղինակների, այլ՝ կամ ըստ մեկնաբանության ձևերի, կամ էլ ըստ թեմատիկ ուղղվածության (օրինակ, առանձին

առանձին ներկայացնել պատմական ժամանակի փիլիսոփայական, աստվածաբանական, պատմական, մարդաբանական, ծիսական ըմբռնումները և այլն):

Վերոնշյալ դիտողությունները չեն ազդում աշխատանքի ընդհանուր գիտական որակի վրա: Ա. Շիրինյանի ատենախոսությունն ինքնուրույն և համակարգված հետազոտություն է: Այն լիովին համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին առաջադրվող պահանջներին: Սեղմագիրն արտացոլում է ատենախոսության հիմնական դրույթներն ու եզրահանգումները, արդյունքների նորությունը և կիրառական նշանակությունը:

Ելնելով վերոգրյալ արժևորումներից և հաշվի առնելով ատենախոսության գիտական ու գործնական նշանակությունը, կարծում եմ, որ Արուսյակ Ալյոշայի Շիրինյանի «**Պատմական ժամանակի ընկալումը հայ եկեղեցական մատենագրության մեջ (V-XV դդ.) (կրոնագիտական վերլուծություն)** Թ.00.05 – «Կրոնի տեսություն և պատմություն» (պատմական գիտություններ) մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետին (**կարող է գնահատվել իբրև գիտության տվյալ բնագավառում կարևոր նշանակություն ունեցող խնդրի լուծում կամ նոր խնդրի առաջադրում**), ուստի հեղինակը արժանի է ստանալու պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

Պաշտոնական ընդդիմախոս
փ.գ.դ., պրոֆեսոր Ս.Ա.Զաքարյան
24 հունիսի 2026թ.
Ս. Ա. Զաքարյանի ստորագրությունն
իսկությունը հաստատում եմ. ԵՊՀ Մ.Վ.Հովհաննիսյան
գիտական քարտուղար